Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը
թվինինգ ծրագրի միջոցով

AM09/ENP-PCA/TP/04

Առաքելության զեկույց

Բաղադրիչ Ա՝ Որակի կառավարում

Ա4.4՝ PX Web-ի սպասարկում

Ծրագրի մասնակիցներ
Յեսպեր Ելեմոսե Յենսեն, Դանիայի վիճակագրություն
Լարս Թիգենսեն, Դանիայի վիճակագրություն

Հայաստան 2013 թ. փետրվարի 12-13-ը

Վերջնական տարբերակ

Հայաստանի Հանրապետության
Ազգային վիճակագրական
ծառայություն

Դանիայի վիճակագրական
ծառայություն

Հեղինակների կոնտակտային տվյալներ

Յեսպեր Էլեմոսե Յենսեն
Դանիայի վիճակագրություն
Sejrøgade 11
DK2100 Copenhagen Ø
Հեռ. +45 3917 3244
jej@dst.dk

Լարս Թիգենսեն
Դանիայի վիճակագրություն
Sejrøgade 11
DK2100 Copenhagen Ø
Հեռ. +45 3917 3941
lth@dst.dk

Հապավումների ցանկ

ԱՊ Անդամ պետություն
ՀՀ ԱՎԾ Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն
ՈԱԽ Որակի աշխատանքային խումբ

Բովանդակություն

1.Ընդհանուր մեկնաբանություններ 4
2.Քայլեր և արդյունքներ 4
Վերապատրաստում 4
PX Web-ի վերազինում 5
Լրացուցիչ աղյուսակներ 5
Ավելի բարդ աղյուսակներ 5
Արտաքին առևտուր 5
ԵՄ լոգո 6
armstatbank.am-ի հետագա զարգացումը 7
armstatbank.am-ի PX ֆալերին ֆայլերին առնչվող գործնական մեկնաբանություններ 7
Փակման արարողություն 8
3.Եզրակացություններ և առաջարկներ 9

Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք և շաբաթվա ծրագիրը 10
Հավելված 2. Հանդիպումներ անձանց հետ 11

1. Ընդհանուր մեկնաբանություններ

Սույն զեկույցը բաղադրիչ Ա-ի վերջին զեկույցն է և նկարագրում է Ա4.1 և Ա4.2 գործունեություններից հետո իրականացված աշխատանքի գնահատումը: Գործունեության ընթացքում ամփոփվեց armstatbank.am-ին առնչվող աշխատանքը: Նոր համակարգը, պլանին համաձայն, լիարժեք շահագործվում է:

ԱՊ փորձագետները ցանկանում է շնորհակալություն հայտնել բոլոր պաշտոնյաներին և անհատներին օժանդակության և տրամադրված արժեքավոր տեղեկատվության համար, ինչը ստացվել է Հայաստանում գտնվելու ընթացքում, և նպաստել աշխատանքի ընթացքի դյուրինացմանը:

Զեկույցի մեջ ներկայացված հայացքները և դիտարկումները պատկանում են նշված փորձագետներին և դրանց համապատասխանությունը Դանիայի վիճակագրական ծառայությանը պարտադիր չէ:

2. Քայլեր և արդյունքներ

Առաքելության ընթացքում փորձագետները իրականացրել են հետևյալ գործողությունները՝

- Հանդիպում ԹՄԽ-ի և ՇԵ բաղադրիչի ղեկավարի հետ՝ վերջին առաքելությունից հետո իրականացված աշխատանքի նկարագիրը և տվյալ առաքելության աշխատանքային ծրագրի համաձայնեցումը
- Լրացուցիչ վերապատրաստման ծառայությունների տրամադրում PX-Edit ծրագրային ապահովումը օգտագործելով PX- ֆայլերի լավագույնս արտադրության վերաբերյալ
- Շնորհանդեսի ներկայացում տվյալների տարածման և ճյուղային բաժինների ներկայացուցիչների համար armstatbank.am-ի աղյուսակներում մեթատվյալների չափանիշների վերաբերյալ
- Օժանդակություն ՀՀ ԱՎԾ-ին կազմված ֆայլերի որակական ստուգումներ կատարելու համար
- Օժանդակություն ՀՀ ԱՎԾ-ին PX-Web ծրագրային ապահովումը armstatbank.am –ին ադապտացնելու համար
- Մասնակցություն Թվինինգ ծրագրի փակման արարողությանը

Ստորև ներկայացված են որոշ գործողությունների մանրամասնությունները:



Վերապատրաստում

2012 թ. ապրիլին Ա 4.1 գործունեության ընթացքում տեղի ունեցավ վերապատրաստում PC-AXIS / PX-Edit և PX-Web վերաբերյալ (զեկույցը հասանելի է www.dst.dk/armenia կայք էջում), որին հաջորդեց 2012 թ. սեպտեմբերին Ա4.2 գործունեությունը: Վերջին վերապատրաստման գործունեությունը իրականացվեց մինչև Armstatbank.am-ի նեդրումը:

PX-Web-ի վերազինում

2012 թ. դեկտեմբերին թողարկվեց dot.Net PX-Web ծրագրային ապահովման նոր տարբերակը: Սույն գործունեության նպատակներից մեկը նոր տարբերակի տեղակայման աշխատանքների օժանդակություն էր: Նոր տարբերակը ունի նոր գործառույթներ (համակցության բուրգեր և վերազինում excel ձևաչափով),սակայն դրանք հիմնականում վերաբերվում են խոշոր, կամ աննշան սխալների շտկմանը: Այսպիսով, վերազինումը իրականացվեց սույն առաքելության ընթացքում՝ Ա4.2 առաքելության զեկույցում ներկայացված առաջարկության համաձայն:

Լրացուցիչ աղյուսակներ

armstatbank.am –ի նեդրումից հետո տվյալների բազան պարունակում էր մոտ 30 աղյուսակներ: Այժմ աղյուսակների քանակը գերազանցում է 70-ը: Դեռևս անհրաժեշտ է իրականացնել համապատասխան աշխատանքներ, և ՀՀ ԱՎԾ-ն պետք է ունենա նվազագույնը մեկ աղյուսակ յուրաքանչյուր վիճակագրական ոլորտի համար, որից հետո հնարավոր կլինի նշել, որ համակարգը ամբողջովին շահագործվում է: Կպահանջվեն ավելի քան հարյուր աղյուսակներ:

Ավելի բարդ աղյուսակներ

armstatbank.am-ի աղյուսակների մեծ մասի տեղեկատվական աղբյուրներ դեռևս հանդիսանում են տպագրված հրապարակումները: Սա նշանակում է, որ աղյուսակները ունեն համեմատաբար քիչ փոփոխականներ (2,կամ 3, ի լրումն ժամանակի փոփոխականին): Առաջարկվում է, ավելացնել ավելի շատ փոփոխականներ ունեցող աղյուսակներ (օր. 4,կամ 5), այդպիսով օգտվողները հնարավորություն կունենան ստանալ ավելի բարդ և մանրամասն տեղեկատվություն:

Արտաքին առևտուր

ՀՀ ԱՎԾ-իայլ համակարգը ներկայումս կազմում և տարածում է արտաքին առևտրին առնչվող տվյալները չորս նիշ մակարդակով: www.armstatbank.am –ի ամբողջականությունը ապահովելու համար առաջարվում է համակարգի մեջ ներառել արտաքին առևտրին առնչվող տվյալներ: Առաջին հերթին կարևոր է օգտագործել մեկ համակարգ տարածման համար, այլապես օգտվողները կսկսեն տարակուսել, և երկրորդ, երկու տարբեր համակարգերի շահագործման համար օգտագործվում են հաստատության բազմաթիվ ռեսուրսներ:

PX-Web ծրագրային ապահովում արտաքին առևտրի տվյալները մուտքագրելիս՝ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել ժամանակի օգտագործմանը: Ներկայիս կառուցվածքում ամսեկան տվյալները բաժանված են երկու տարբեր փոփոխականների: Օգտագործվում է մեկ փոփոխական տարվա և մեկ փոփոխական ամսվա համար:

Այս մոտեցման օգտագործումը չի խրախուսվում: Փոխարենը, ավելի նպատակահարմար կլինի ունենալ մեկ փոփոխական, որը կներկայացնի ժամանակահատվածը: Այս փոփոխականը պետք է ունենա տարի/ամիս ձևաչափը՝ օր ՝ 2013M01, 2013M02, կամ եռամսյակային տվյալների դեպքում ՝ 2013Q1, 2013Q2: Այս մոտեցումը կապահովի, որ ժամանակը ներկայացնող փոփոխականների արժեքները լինեն միշտ ճշգրիտ դասակարգված:

Քանի որ ամիսների անվանումները սույն մոտեցման կիրառմամբ չեն դասակարգվում այբենական կարգով, օգտվողները խնդիրներ կունենան տվյալները ժամանակային շարքերով ներկայացնելու դեպքում: Տվյալ մոտեցման այլ խնդիրը այն է, որ օգտվողները կարող են ընտրել տվյալներ, որոնք տրամաբանորեն հասանելի չեն օր՝ 2013 թ. Դեկտեմբեր, քանի որ այս զեկույցը կազմվում է փետրվարին հունվար ամսվա տվյալները ավելի հետաքրքիր են: Այսպիսով, ժամանակահատվածի փոփոխականը պետք է դասակարգվի և պետք է պարունակի միայն տվյալներ ունեցող արժեքներ:



ԵՄ Լոգո

ԵՄ պահանջին համաձայն ՀՀ ԱՎԾ –ն ներառեց ԵՄ լոգոն armstatbank.am կայք էջում սեպտեմբեր ամսին: Ի լրումն, ներդրվել է armstatbank.am-ի օգտագործման վերահսկման ծրագրային ապահովումը:

Այն հանգամանքը, որ ՀՀ ԱՎԾ-ի աշխատակիցներին հաջողվեց ներդնել տվյալ գործառույթները համակարգի մեջ առանց Դանիայի վիճակագրության

ներկայացուցիչների հետ խորհրդատվության, վկայում է, որ SS մասնագետների կողմից ամբողջովին հասկացվել են համակարգի շահագործման սկզբունքները:

www.armstatbank.am-ի հետագա զարգացումը

ՀՀ ԱՎԾ պատրաստվում է ընդարձագել ARMSTATBANK.AM –ը, և այդպիսով այն կպարունակի ՀՀ ԱՎԾ-ի կողմից արտադրվող ողջ վիճակագրական տեղեկատվությունը:

Որպես վերահսկման գործիք ներդրվել armstatbank.am-ի օգտագործման վերահսկման համակարգ ՀՀ ԱՎԾ-ի կողմից և ժամանակի ընթացքում հնարավոր կլինի հետևել առաջընթացին:
Հաջորդ տրամաբանական քայլն է արտաքին առևտրի վիճակագրության ներդրումը 2, 4, 6 և 8 նիշ մակարդակներով:

2013 թ. կեսին Ֆինլանդիայի վիճակագրության կողմից կմշակվի տվյալները քարտեզների միջոցով ներկայացնելու հնարավորությունը: Այս համատեքստում ՀՀ ԱՎԾ-ն armstatbank.am պետք է ավելացնի համապատասխան բաղադրիչ և տվյալներ մարզային մակարդակով (քաղաքապետարանների մակարդակով, կամ ավելի փոքր):

armstatbank.am-ում PX ֆայլերին առնչվող գործնական մեկնաբանություններ

Ա4.2 առաքելության զեկույցում ներկայացված են մի շարք առաջարկություններ ֆայլերի արտադրման համար: Առաջարկությունները մնում են ուժի մեջ, սակայն թվում է, որ աշխատանքների որակը բարելավել է և այժմ ՀՀ ԱՎԾ-ն հեշտությամբ արտադրում է ֆայլերը և իրականացնում արդիականացումները:

Փակման արարողություն

2013 թ. Փետրվարի 13-ին տեղի ունեցավ ծրագրի փակման արարողությունը: Միջոցառումը տեղի ունեցավ «Էրեբունի պլազա» բիզնես կենտրոնում: Տկն. Կլաուդիա Յունկերը ներկայացրեց Եվրոստատը և խոսեց միջազգայնորեն համադրելի վիճակագրության համադրելիության կարևորության մասին և հայտնեց իր բավարարվածությունը Թվինինգ ծրագրի առաջընթացի վերաբերյալ: Միջոցառմանը նաև մասնակցեցին ԵՄ պատվիրակության ղեկավար Պրն. Հրիստիան Հիստերիան, Էկոնոմիկայի նախարար պրն. Տիգրան Դավթյանը և Գերմանիայի վիճակագրության ծրագրի գործընկեր Պրն. Ռապախը:
ԱՊ նախագծի ղեկավար Պրն.Թիգենսենը և Թվինինգ մշտական խորհրդատուն Թոմաս Բին պատիվ ունեցան ներկայացնելու նախագծի հիմնական արդյունքները:

Տկն.Կլաուդիա Յունկերը և ՀՀ ԱՎԾ-ի նախագահ Պրն. Ստեփան Մնացականյանը պատասխանեցին Հայաստանի լրատվամիջոցների հարցմանը: Միջոցառման ավարտին կրկին ներկայացվեց armstatbank.am կայք էջը:

3. Եզրակացություններ և առաջարկներ

Ներկայացվեցին մի քանի առաջարկություններ `

Առաջարկներ

- Շարունակել PX ֆայլերի արտադրությունը և սահմանել հստակ քանակությամբ PX ֆայլեր, որոնք պետք է հասանելի լինեն մինչև 2013 թ. ավարտը:
- Տարածել արտաքին առևտրի վիճակագրությունը օգտագործելով www.armstatbank.am և օգտագործել մեկ փոփոխական ժամանակահատվածի համար
- Ավելացնել աշխարհագրական մակարդակի տվյալներ
- Փոփոխել ժամանակահատվածի ձևաչափը՝ միասնական տարվա և ամսվա փոփոխականի
- Շարունակել armstatbank.am –ի արտաքին օգտագործման վերահսկումը
- Հաշվի առնել armstatbank.am-ի օգտվողների համար ավելի մանրամասն նկարագրող փաստաթղթի մշակման հնարավորությունը
- Ապահովել տարբեր որոնողական կայքերում armstatbank.am-ի ճանաչումը տվյալների հարցման դեպքում
- Մասնակցել PC-Axis միջազգային հանդիպումներին, որպեսզի ՀՀ ԱՎԾ- ն ունենա որոշակի ազդեցություն ծրագրային ապահովման հետագա զարգացումներում:

Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք և շաբաթվա ծրագիրը

9-րդ կառավարող նիստ

1. Գործունեության նպատակը՝
Գործունեության նպատակն է 9 րդ կառավարող նիստին և ծրագրի պաշտոնական փակման արարողության մասնակցությունը: Ի լրումն, կիրականացվի նաև վերջին Ա 4.4 գործունեությունը, որը նվիրված կլինի PX Web ծրագրային ապահովման հետագա զարգացումներին:

1. Գործունեության ակնկալվող արդյունքը՝
Կիրականցվի PX-Web / ARMSTATBANK-ի հետագա զարգացումը և կպլանավորվի արտաքին առևտրի վիճակագրության ներդրումը այդ համակարգի մեջ: Ծրագիրը կամփոփվի կառավարող նիստի և պաշտոնական փակման արարողության ընթացքում:

2. Ծրագրի մասնակիցներ
Պրն. Ստեփան Մնացականյան, ՀՀ ԱՎԾ Նախագահ (*ՇԵ Բաղադրիչի ղեկավար*)
Տկն.Անահիտ Սաֆյան, Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ
Պրն. Վանուշ Դավթյան, Պետական վիճակագրության խորհրդի անդամ
Տկն. Նարինե Մուշեղյան, Տեղեկատվության տարածման բաժնի պետ

Պրն. Լարս Տիգենսեն, Դանիայի վիճակագրության վաճառքի տնօրեն (*ԱՊ Բաղադրիչի ղեկավար*)
Պրն. Ռինգո Ռապախ, Գերմանիայի վիճակագրություն(Կրտսեր նախագծի ղեկավար)
Պրն. Յեսպեր Էլեմոսե, Դանիայի վիճակագրության գլխավոր խորհրդատու

ՀՀ ԱՎԾ այ աշխատակիցեր, որրոնք կմասնակցեն գործունեությանը՝
SS վարչության և տեղեկատվության տարածման բաժնի աշխատակիցներ

3. ԱՊ Փորձագետների հանդիպման ծրագիրը՝ 2013 թ. փետրվարի 12-13-ը

Ժամը	Վայրը	Միջոցառումը	Նպատակը/Մանրամասնությունները
Փետ. 12, երեքշաբթի 12:00	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ԹՄԽ-ի հետ	Թվինինգ ծրագրի կարգավիճակի արդիականացում
14:00	ՀՀ ԱՎԾ	PX Web-ի կարգավիճակի արդիականացում	PX Web վերջին տարբերակի տեղակայում և քննարկում արտաքին առևտրի վիճակագրության ARMSTATBANK ներդրման մասին (Պրն. Եսպեր Էլեմոսե Յենսեն)
14:30-16:00	Էկոնոմի-կայի նախարա-րություն	SATTO փակման արարողություն	Վիճակագրության Թվինինգ ծրագրի ներկայացումը որպես որոշակի օրինակ թվինինգ նախագծերի համատեքստում

16:30-17:30	ՀՀ ԱՎԾ	Կառավարող նիստ	9ի-դդ և վերջին կառավարող նիստ՝ Ամփոփում և նախապատրաստում փակման արարողությանը
Փե. 13 Feb, չորեքշաբթի . 10:00-13:00	Էրեբունի Պլազա	Ծրագրի փակման արարողություն	Ներկայացված է համապատասխան օրակարգի մեջ
Կեսօր	ՀՀ ԱՎԾ	Ներքին ամփոփում ՇԵ ծրագրի ղեկավարի հետ	PX Web և ARMSTATBANK-ի աշխատանքների ամփոփում: Վերջնական համաձայնություններ և նախագծի իրականացման ամփոփում

Հավելված 2. Հանդիպումներ անձանց հետ

Պրն. Ստեփան Մնացականյան, ՀՀ ԱՎԾ Նախագահ (*ՇԵ Բաղադրիչի ղեկավար*)
Տկն.Անահիտ Սաֆյան, Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ
Տկն. Կլաուդիա Յունկեր, Եվրոստատի Միջազգային համագործակցության բաժնի պետ
Պրն, Հրիստեա Տրայան, Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար
Պրն. Վովա Օբայանցև, SS վարչության պետ
Տկն. Աիդա Մարտիրոսյան, SS զարգացման բաժնի պետ
Տկն. Սոնա Մանուկյան, SS մասնագետ
Տկն. Նարինե Մուշեղյան, Տեղեկատվության տարածման բաժնի պետ